վերաբերյալ տեղեկությունների հավաքումը դպրոցական ցանցի աշխատողների, գլխավորապես ուսուցիչների միջոցով։ Այդ նպատակով վարչությունը մշակել էր համապատասխան ուղեցույցներ, որոնցով հանձնարարվում էր մանրամասն և բազմակողմանի նկարագրել առանձին վայրերի և էթնիկ խմբերի անցյալ և ներկա կյանքը և հատուկ ուշադրություն դարձնել ժողովրդական բանահյուսության գրանցման վրա։ Ստացված նյութերը վարչությունը լույս էր ընծայում առանձին հատորներով՝ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» ընդհանուր վերնագրի տակ[1]։

Այդ ժողովածուի մեջ Զանգեզուրի ազգագրական նկարագրությանը նվիրված առաջին հոդվածը լույս է տեսել 1892 թ. հրատարակված XIII գրքում։ Դա ուսուցիչ Ն. Գրիգորովի «Село Татев» աշխատությունն էր[2]։ Հաջորդ, 1893 թ. լույս տեսած «Ժողովածուի» XVII գրքի մեջ զետեղված է Արծվանիկ գյուղի դպրոցի ուսուցիչ Եփրեմ Մելիք-Շահնազարյանի հոդվածը, «Из поверий, предрассудков и народных примет армян Зангезурского уезда»[3], որը վերահրատարակվեց 1904 թ. XXXIV գրքում՝ անեկդոտներով, օրհնանքներով, անեծքներով և այլ ֆոլկլորային նյութերով ու կենցաղային նկարագրություններով հարստացրած[4]։ Նույն հեղինակը հրատարակեց 1894 թ. «Ժողովածուի» XIX գրքում՝ «Свадьбы зангезурских армян»[5] հոդվածի մեջ հարսանեկան սովորությունների մանրամասն նկարագրությունն և ապա 1898 թ. XXV գրքում՝ «Селение Арцваник Зангезурского уезда Елисаветпольской губернии»[6] գավառի տիպիկ գյուղի կենցաղի ամբողջական պատկերը։

Հոդվածների այս շարքի մեջ հեղինակը դրսևորեց գավառի ազգագրական առանձնահատկություններին իր լավատեղյակ լինելը։ Շատ ավելի աղքատ է հավաքած ազգագրական տեղեկություններով Խնձորեսկի դպրոցի ուսուցիչ Ն. Շիրակունու հոդվածը «Ժողովածուի» XXXIV գրքում (1904 թ.)՝ «Зангезурский уезд Елисаветпольской губернии»[7], որտեղ նաև Զանգեզուրի աշխարհագրությանը նվիրված էջերը թողնում են թռուցիկ ակնարկի տպավորություն։

Մի երրորդ հիմնարկ, որի գիտական հետաքրքրությունը ընդգրկել է նաև Զանգեզուրի կենցաղը, Կովկասի բժշկական ընկերությունն էր, որը գավառներում աշխատող իր անդամների օժանդակությամբ նյութեր էր հավաքում Կովկասի զանազան վայրերի բնակչության առողջապահիկ վիճակը պարզելու համար և առանձնապես շահագրգռված էր ծանոթանալու ժողովրդական բժշկության միջոցներին և եղանակներին՝ նպատակ ունենալով գիտական քննության ենթարկել այդ միջոցներն ու եղանակները և ապա իր պրակտիկայում օգտագործել դրանցից այն մասը, որը գիտական հիմք ունի։ Ընկերության հրատարակած պարբերական հանդեսի՝ «Медицинский сборник» № LVI-ի մեջ 1894 թ. լույս է տեսել բժ. Գեղեվանովի հոդվածը՝ «Зангезурский уезд Елисаветпольской губернии в медицинском отношении», որտեղ հեղինա-

---

[1] Կրճատ՝ СМОМПК

[2] Отд. II, էջ 59—125։

[3] Отд. II, էջ 193—201։

[4] Отд. III, էջ 91—124։

[5] Отд. II, էջ 220—226։

[6] Отд. II, էջ 1—58։

[7] էջ 182—217։